Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար կրծողների և մակաբույծների ոչնչացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-25/1 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

23 հոկտեմբերի 2024թ.
ժամը՝ 12.45

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան, Վ.Մամբրեյան, Ա.Լալայան*, Լ.Կուրղինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան
*նիստից բացակայում է Ա.Լալայանը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)***
1	ախտահանման – մակաբույծների ոչնչացման ծառայություններ	180000
2	ախտահանման – մակաբույծների ոչնչացման ծառայություններ	90000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 21.10.2024թ.-ին ժամը 12:45-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 22.10.2024 թ.-ին ժամը 12:45-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«ԵրՄիք» ՍՊԸ	ք.Երևան Զավարյան 43	010540795	ermik50@mail.ru
2	«Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ	ք. Երևան, Խորենացու 160	010573590	desinfection.c@mail.ru

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-25/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

/հ	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ	180000	179651	0 %	179651	115000	0 %	115000.00
1	2	ԵրՄիք ՍՊԸ	180000	120000	0 %	120000	120000	0 %	120000.00
2	1	Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ	90000	89651	0 %	89651	55000	0 %	55000.00
2	2	ԵրՄիք ՍՊԸ	90000	60000	0 %	60000	60000	0 %	60000.00

Աճուրդն ամփոփվել է 22.10.2024 թվականին: Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

7. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով Մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց՝

- Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ-ի հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ Մասնակցի կողմից ներկայացվել է Հրավերի պահանջներին անհամապատասխան՝ թերի տեղեկատվություն, մասնավորապես, «Սույնով Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ-ն հայտարարում և հավաստում է...» նախադասությունը անհրաժեշտ է խմբագրել նշելով՝ «Սույնով Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք հայտարարում և հավաստում են...»: Հավելված 1-ում և Հավելված 1.3-ում Բացակայում է Մասնակցի ղեկավարի պաշտոնը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ Հանձնաժողովը որոշեց 23.10.2024թ. նիստը կասեցնել՝ առաջարկելով Երևանի կանխարգելիչ ախտահանում ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 25.10.2024թ. ժամը 12:45-ին, ք. Երևան, Մ.Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Վաչե Մամբրեյան

_____ Լևոն Կուրղինյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան